

## Մերգեյ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

### ՀԱՏՈՒԿ ՀՆՉԵՐԱՆԳՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԱԴԱՍԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Մրանք սովորաբար այն նախադասություններն են, որոնց բնորոշ է առանձնահատուկ՝ հրամայական, հարցական կամ բացականչական հնչերանգ: Այսպիսի նախադասություններում շարադասական բաղադրիչների հաջորդականությունը, ի տարբերություն սովորական պատմողական երանգի նախադասությունների, առավել քան ենթակա է հնչերանգային գործոնի ազդեցությանը, ավելին, հաճախ գերազանցապես պայմանավորված է դրանով և ամբողջովին ենթարկվում է նման նախադասությունների հուզահաղորդակցական ուրույն դերի ու նշանակության իրացմանը: Այսպիսի նախադասությունները իրարից շատ դեպքերում տարբերվում են ոչ միայն իրենց հատուկ հնչերանգի բնույթով, ոչ միայն նախադասության բաղադրիչների խոսքիմասային, եղանակաժամանակային (մասնավորապես ստորոգյալի), կամ որևէ այլ ձևաբանական առանձնահատկությամբ կամ էլ սպասարկու բառերի (ձայնարկություններ, վերաբերականներ, կոչականներ և այլն) նկատելի առատությամբ: Դրանք իրարից հաճախ զանազանվում են նաև իրենց բավականին ինքնատիպ շարադասական կաղապարավորմամբ: Այս տեսակետից նկատելիորեն առանձնանում են հատկապես հրամայական երանգի նախադասությունները: Պատճառը, կարծում ենք, առաջին հերթին հրամայական նախադասությունների՝ մեծամասամբ կառուցվածքայնորեն թերի (սովորաբար ենթակայի գեղջմամբ) լինելու մեջ է: Մեր կողմից քննության առնված բնագրային օրինակներում այդպիսին էին 310 հրամայական նախադասություններից 264-ը (մոտավորապես 85 %-ը), ինչպես օրինակ՝ *Տո՛ր զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ /ՂՓՊՀ, 180/:* *Արի՛ և մի՛ մերժեր զմեզ վասն անուան քոյ /Ազաթ., 111/* և այլն:

Ի դեպ, այդ տոկոսի մեջ զգալի թիվ են կազմում այն կառույցները, որոնցում կա ենթական անվանող կոչական բաղադրիչ: Վերջինիս առկայությունը հրամայական նախադասություններում սովորաբար ի չիք է անում առանց այն էլ ձևական ենթակայի անհրաժեշտությունը, ինչպես օրինակ՝ *Որդեա՛կ, զօրէնս իմ մի՛ մոռանար /Առակք, Գ, 1/:* *Արի՛ եկ, մերձատր՛ իմ, գեղեցի՛կ իմ, աղաւնի՛ իմ /Երգ, Բ, 13/:* Թեև համեմատաբար սակավ դեպքերում հնարավոր է նաև հավելադիր ենթակայի զուգահեռ առկայությունը, ինչպես՝ *Դու, Տէ՛ր, լե՛ր մեր օգնական այսօր /Եղ., 130/:* *Սակայն դու, Տէ՛ր, պահեա՛ զանձինս մեր յամարժան խայտառականցս /Ազաթ., 94/:*

Գրաբարի հրամայական նախադասությունների շարադասական առանձնահատկությունների քննությանն անցնելուց առաջ հարկ ենք համարում նշել, որ գործածում ենք լեզվաբանական գրականության մեջ ընդունված հետևյալ պայմանական նշանները՝ P (ստորոգյալ), S (ենթակա), A (պարագաներ), O (խնդիրներ), ինչպես նաև «ձայնարկ.», «վերաբ.», «կոչ.» նշումները՝ համապատասխանաբար անվանելու հրամայական կառույցներում այնքան հաճախակի հանդիպող ձայնարկությունները, վերաբերականներն ու կոչականները: Ընդ որում, ինչպես նախկինում, այնպես էլ հրամայական նախադասությունների շարադասության քննության հետ կապված՝ ելնում ենք այն իրողությունից, որ նախադասության շարադասական կաղապարի բաղադրիչներ այիտի համարվեն ոչ միայն նախադասության անդամները, այլ նաև այն բառերն ու կապակցությունները, որոնք նախադասության արտահայտության պլանում շարահյուսական կապի մեջ չեն նախադասության անդամների հետ:<sup>1</sup> Միանգամայն իրավացի է Վ. Քոսյանը, երբ գրում է. «Շարահյուսական կապի բացակայությունը չի նշանակում, թե այդ բառերն ու կառույցները մտային կապ չունեն նախադասության կազմիչների

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տես՝ Ս. Հայրապետյան, Ենթակայի, ստորոգյալի և ուղիղ խնդրի շարադասությունը դասական գրաբարում, «Հայոց լեզվի պատմության հարցեր», հ.2, Եր., 1985, էջ 73-74:

հետ: Առանց այդպիսի կապերի առկայության նրանք չէին գործածվի առհասարակ»:<sup>2</sup> Ավելին, կարելի է առանց վարանելու նշել, որ յուրաքանչյուր նախադասությամբ (ի մասնավորի նաև՝ հրամայական) հաղորդվող մտքի ավարտունության ապահովման, շարահյուսական ձևավորման տեսակետից արդի քերականագիտության մեջ «մեկուսացած անդամներ»<sup>3</sup> համարվող այս միավորները (կոչականներ, ձայնարկություններ և այլն) կարող են որոշակի դեր խաղալ: Ելնելով դրանից՝ վերոհիշյալ միավորները համարում ենք նախադասության շարադասական կաղապարի նույնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են նախադասության «ավանդական» անդամները:

Բնագրային նյութի հանգամանալի քննությունը թույլ է տալիս դասական գրաբարի հրամայական նախադասությունների համար շարադասական լիակաղապար դիտել այն կառույցը, որտեղ այս կամ այն գծային հաջորդականությամբ միաժամանակորեն առկա են շարադասական բոլոր հնարավոր բաղադրիչները՝ ձայնարկություն կամ վերաբերական, կոչական բառ կամ բառակապակցություն, ենթակա, ստորոգյալ, բայական անդամի խնդիր կամ պարագա լրացումներ, մաս սրանց լրացումներ: Եվ քանի որ այդ լիակաղապարն իր մեջ անհրաժեշտորեն պիտի միաժամանակ ընդգրկի հնարավոր բոլոր շարադասական բաղադրիչները, նշանակում է, ինչպես նշում է Գ.Չահուկյանը՝ «կարող է չունենալ ոչ մի նմուշ»<sup>4</sup> և դրսևորվել միայն իր մասնակի տեսակների մեջ՝ մասնակաղապարներով:

Այնուհանդերձ դասական գրաբարի նյութի ուսումնասիրության հիման վրա բանաձևել ենք հրամայական նախադասությունների շարադասական հիմնակաղապար՝ բաղադրիչների փոխդասավորության մի քանի տարբերակներով: Դրանցից մեկը բաղադրիչների {S → («ձայնարկ.» + «կոչ.») → P → A → (O) } հաջորդականությունը ունեցող հիմնակաղապարային տարբերակն է, ինչպես օրինակ՝ *Իսկ դու, ո՛վ ուշիմ ընթերցաստերդ, հայեաց աստանօր ընդ հառասարտիս կարգի երից ազգացդ /ՄԽՊՀ, 17/:*

Հիմնակաղապարի մեկ այլ տարբերակային դրսևորում է { («Չայնարկ.» + «Կոչ.») → P → O կամ A → S }-ը, ինչպես՝ *Մյ խարեբայ և չարագործ, տուեալ լիցի քեզ քազատրութիւնն ինն հազար ամի /Եզն., 94/:*

Ակնհայտ իրողություն է այն, որ կոչականի առկայության դեպքում նախադասության ենթական սովորաբար չի արտահայտվում, առավել ևս, երբ խոսքը վերաբերում է հրամայական նախադասություններին, որոնք առանց այդ էլ գերակշռող մեծամասնությամբ ենթակայազուրկ են: Լավագույն դեպքում կոչականին հարադրվող դերանուն ենթական, իրոք, ձևական է, որովհետև նրա բովանդակությունը հենց այդ կոչականի մեջ է թաքնված:<sup>5</sup> Մյուս կողմից՝ ակներև է, որ կոչականին առաջադասվող այդպիսի ենթակայի շնորհիվ կոչականով արտահայտված կոնկրետ առարկան, որին ուղղված է խոսքը, ոչ միայն վերածվում է մտքի շեշտն իր վրա կրող հրամայական բայ-ստորոգյալին զուգահեռ տրամաբանորեն նույնքան ընդգծուն երկրորդ բաղադրիչի, այլև սաստկանում է այդ առարկային ուղղված խոսքի ուժը: Այդ իսկ պատճառով մասնատիպ կառույցներն ունենում են հնչերանգային երկու բարձրակետեր, որոնցից մեկի կրողը նախադասության ստորոգյալն է, մյուսինը՝ դերանուն ենթական կոչականի հետ: Այս իրողությունը ակնհայտ դրսևորում ունի վերոհիշյալ բաղադրիչների սկզբնային դիրք ունեցող հրամայական նախադասություններում, որոնք կարելի է բանաձևել մի քանի շարադասական մասնակաղապարներով:

Դրանցից առաջինը { S → «Կոչ.» → P → (O կամ A) } մասնակաղապարն է, որ, մեր հաշվումներով, բնորոշ է դասական գրաբարի ենթակա ունեցող հրամայական նախադասությունների մի բավականին սովոր մասին: Սկզբնային դիրքում դերանուն ենթական իրեն անմիջապես հաջորդող կոչականի հետ միասին վերջինիս ուժեղ շեշտվածության շնորհիվ նախադասության մնացած մասից տրոհվում է բավականին զգալի արտասանական դադարով, ինչը կարող է նույնիսկ մեղմել կամ նկատելիորեն թուլացնել հրամայական բայով միջադաս ստորոգյալի տրամաբանական ընդգծվածությունը:

<sup>2</sup> Վ. Զ ո ս յ ա ն, *Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր*, Եր., 1976, էջ 116:

<sup>3</sup> Նույնը:

<sup>4</sup> Գ. Չ ա հ ո կ յ ա ն, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Եր., 1969, էջ 115:

<sup>5</sup> Խ. Բ ա դ ի կ յ ա ն, *Կոչականը և նրա ուսուցումը*, Եր., 1982, էջ 14:

Այդպես է, օրինակ՝ *Եւ դու՛, որդի՛ մարդոյ, մարգարեաց ի վերայ լերանցն Իսրայիլի /Եզեկ., 12, 1/*: *Դու, Տէ՛ր մարդասէր և բաղքը, ընկալ՛ և խառնեա՛ և զիմ ոգիս ի գունդ քո ստոր վկայիցն /Ազաթ., 201/*: *Այլ դու՛, որդեակ իմ, զօրացի՛ր շնորհօք /Բ Տիմօթ., Բ, 1/*: *Դու՛, Տէ՛ր, լին՛ մեր օգնական այսօր /Եղ., 130/* և այլն:

Դրա դեմն առնելու նպատակ ունի նման կառույցներում ստորոգյալի տեղաշարժը դեպի նախադասության սկիզբ, ինչի շնորհիվ վերականգնվում է ստորոգյալի բարձր հնչերանգը, և այս դեպքում հրամայական նախադասությունը կրկին ունենում է արտասանական երկու, զրեթե հավասարազոր, բարձրակետեր: Այսպիսի նախադասություններն ունեն  $\{ P \rightarrow S \rightarrow \langle \text{Կոչ.} \rangle \rightarrow (O \text{ կամ } A) \}$  շարադասական մասնակադասաբարձ *Տե՛ս դու, Գրիգորի՛ս ... /Ազաթ., 67/*:

Դասական գրաբարում թեև քիչ, բայց հանդիպում է նաև հրամայական նախադասության մի այնպիսի տարատեսակ, որում տրամաբանորեն ուժգին ընդգծվելու նպատակով սկզբնային դիրքում է հայտնվել ոչ թե ստորոգյալն ամբողջությամբ, այլ նրա մի՛ արգելականը, ինչպես օրինակ՝ *Մի՛ կարի զանձն քո աշխատ առներ այդչափ /Բուզ., 124/*: Որ դա իրոք այդպես է, կասկածի տեղիք չի տալիս, մասնավաճ, երբ արգելական մասնիկը կրկնվում է միջնամասում, ինչպես, օրինակ՝ *Մի՛ դու, արքայ՛, և մի՛ զայդ այլ առ մեզ ասեր /Եղ., 92/*: Հատկանշական է, որ այսպիսի դեպքերում ստորոգյալի տրամաբանորեն աննշանակ բայական մասը հեշտությամբ կարող է զբաղեցնել նույնիսկ նախադասության ամենաթույլ արտասանվող հատվածը՝ վերջը, որ, անշուշտ, հրամայական բային ոչ բնորոշ դիրք է: Ամենայն հավանականությամբ նաև սա է պատճառը, որ նմանատիպ հրամայական կառույցները սովորաբար ոչ թե հրաման, պահանջ կամ կոչ են արտահայտում, այլ հորդոր, խնդրանք, հանդիմանություն, այսինքն՝ աչքի են ընկնում իրենց համեմատաբար մեղմ տոնայնությամբ:

Խ. Բաղիկյանը գրում է, թե «կոչականի տեղը նախադասության մեջ մեծ չափով ազդում է նրա կշռի և էնոցիմալ ներգործության վրա»:<sup>6</sup> Սա պիտի հասկանալ այնպես, թե հրամայական նախադասություններում կոչականի դիրքն ու հնչերանգը իրար փոխապայմանավորող իրողություններ են: Որ կոչականի տրամաբանորեն առավելագույնս ընդգծված լինելը նախադասության կազմում նրա ունեցած սկզբնային դիրքի շնորհիվ է, իրոք, կասկածի տեղիք չի տալիս (*Կի՛ն, դու հաստատ՛ ինձ /Յոն., Դ, 21/* և այլն): Եվ ընդհակառակը, այն շարադասական մասնակադասաբարձերում, որոնցում հրամայական կառույցի կոչականը տեղափոխված է նախադասության վերջ, այդպիսի կոչականը համեմատաբար քիչ նկատելի է և թույլ ընդգծված, որովհետև այդպիսին է սովորաբար նախադասության վերջը: Եվ, իրոք, անատարկելի է, որ հրամայական նախադասությունը եզրափակող դիրքում կոչականը զգալի չափով կորցնում է իր ընդգծվածությունը, արտաբերվում է թույլ հնչերանգով՝ վերածվելով մի տեսակ թարմատարի: Այսպիսի նախադասությունները, որոնցում ենթակաները մեծամասամբ զեղչված են լինում, դասական գրաբարում ունեն հիմնականում  $\{ (S) \rightarrow P \rightarrow O \text{ կամ } A \rightarrow \langle \text{Կոչ.} \rangle \}$  շարադասական մասնակադասաբարձ և սովորաբար ոչ թե կոշտ հրաման, այլ նախորդների նման՝ պատվիրան, խնդրանք, զգուշացում, հրավեր կամ հորդոր են արտահայտում, ինչպես օրինակ՝ *Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց, Աստուած՛ /Մաղմ., ԾԸ, 1/ կամ Նայեա՛ց ի սրբութիւն քո, Տէ՛ր /Յոդիթ, 2, 15 /*:

Ի դեպ, ասվածն ավելի ցայտուն է դիտվում այն դեպքերում, երբ տրամաբանական շեշտը իր վրա կրող ստորոգյալից առաջ՝ նախադասության սկզբում է դրված ստորոգյալի միջուկի բաղադրիչը՝ ընդգծման նպատակով: Այսպիսի կառույցներին, որոնք ունեն  $\{ O \text{ կամ } A \rightarrow P \rightarrow (S) \rightarrow \langle \text{Կոչ.} \rangle \}$  շարադասական մասնակադասաբարձ, բնորոշ է ձևական ենթակայի համեմատաբար առատ գործածությունը: Օրինակ՝ *Արդ՛ զմի բան զմեր վաղվադակի կատարեա՛ դու, արքայ՛ /Եղ., 18/*: Ավելացնենք նաև, որ գրաբարում բավականին նկատելի է ենթակայի բացակայության դեպքում վերջադաս թույլ կոչականի վրա երկրորդ դեմքի դիմորոշ հոդի սովորականությունը, ինչպես՝ *Ել՛ ի վերայ լերինդ բարձու, անետարանիչդ Մի՛նի, բարձրացո՛ զբարբառ քո, անետարանիչդ Երուսաղեմի /Ազաթ., 427/*: *Գիտեա՛, ասե, ո՛վ մեծդ դիցազանց /ՄԽՊՀ, 1, ԺԱ/*:

<sup>6</sup> Խ. Բ ա դ ի կ յ ա ն, *Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը*, Եր., 1976, էջ 179:

Շատ հաճախ վերջադաս թույլ ընդգծված կոչականը գրաբարում բազմանդամ է: Ընդ որում, ինչքան ծավալուն է կոչականը նախադասության վերջում, այնքան նրա արտաբերումն ավելի թույլ է:

Օրինակներ՝ *Հայեա՛ց յօգնել ինձ, Տէ՛ր փրկութեան իմոյ /Սաղմ., ԼԷ, 23/*: *Ունկնդիր լերու՛ք, ամենեքեան ... ծնունդք երկրի և որդիք մարդկան, ի միասին մեծամեծք և տնանկք /Ազաթ., 688/*: *Օրհնեցէ՛ք զնա երկինք և երկիր և հրեշտակք և զօրութիւնք և հուր և հողմք և մրրիկք /Եզն., 158/*: *Երբայք յինէն, անիծեայք ի հուրն յախտենական /Սաաթ., ԻԵ, 41/*:

Ակնհայտորեն թուլանում է նաև միջադաս կոչականի հնչերանգային ծանրաբեռնվածությունը, եթե առաջադաս ստորոգյալից ընդմիջված է նրա լրացումով, ինչպես՝ *Տու՛ր ինձ, Տէ՛ր, շնորհս համբերութեան դառն տանջանասցս /Բուզ., 56/*: *Օրէնսգէ՛տ արա զիս, Տէ՛ր, ի ճանապարհս իրաւանց /Սաղմ., ՀԷ, 33/*:

Այնուամենայնիվ, ինչպես ասվեց վերևում, դասական գրաբարում կոչականով հրամայական նախադասությունների գերակշիռ մասը ենթակայագուրկ է՝ արտահայտված կոչականով և ստորոգյալի միջուկով, որի մեջ սովորաբար ստորոգյալի հետ համդեմ է գալիս նաև որևէ խնդիր կամ պարագա տեսակի լրացում կամ երկուսը միաժամանակ: Այսպիսի հրամայական նախադասությունները ունեն նշված շարադասական բաղադրիչների փոխդասավորության մի քանի կաղապարային տարբերակներ, որոնց մեջ մեր հաշվումներով և՛ թարգմանական, և՛ ինքնուրույն գործերում ամենատվորականն ու գործածականը { «Կոչ.» → P → O կամ A } մասնակաղապարն է:

Օրինակներ՝ *Որդի՛ մարդոյ, դարձո՛ւ զերեսս քո ի վերայ լերինդ Սէիրայ /Եզն., ԼԵ, 1/*: *Այլ, Տէ՛ր, տու՛ր ինձ զօրութիւնս համբերութեան նեղութեան ցաւոց վտանգիս իմոյ /Ազաթ., 86/*: *Արքայ՛ քաջ, ունկն դիր սակաւ բանից մերոց /Եղ., 90/*: *Եկեղեցու՛յ սիրիչք, առաքելոց որդիք, Քրիստոսի արեան զինք, մի՛ ծառայեցուցանէք հոգիս ձեր երկիրդ մարդկան /ՂՓՊՀ, 180 /*:

Այս շարադասական մասնակաղապարով դրսևորվող հրամայական նախադասություններն ունեն իրենց սկզբնային մասի ոչ միայն խիստ բարձր, այլև տևական հնչերանգ, որովհետև տրամաբանական զորեղ շեշտ են կրում և՛ նախադաս կոչականը, և՛ նրան անմիջապես հաջորդող հրամայական բայը:

Օրինակներ՝ *Կեղծատ՛ր, հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ /Սաաթ., Է, 5/*: *Հայր, ապրեցո՛ւ զիս ի ժամէ աստի յայսմանէ /Յոն., ԺԲ, 27/*: *Դստերք Երուսաղեմի, մի՛ լայք ի վերայ իմ /Ղուկ., ԻԳ, 28/* և այլն:

Գործածության հաճախականությամբ այս մասնակաղապարային տարբերակին շատ քիչ է զիջում շարադասական բաղադրիչների { P → «կոչ.» → O կամ A } հաջորդականությունն ունեցող տարբերակը, որում նախորդի նման՝ կրկին տրամաբանորեն ընդգծուն է նախադասության սկիզբը, ինչպես՝ *Արդ՛ նայեա՛ց, Տէ՛ր, յերկնից ի սրբութենէ քումմէ /Ազաթ., 148/*: *Լուարու՛ք, մանկու՛նք, զխրատ հօր /Առակք, Գ, 1/*: *Օրհնեա՛, տէ՛ր եպիսկոպոս, զմեզ և զայգիս /Բուզ., 16/*: *Լո՛յս տուր, Տէ՛ր, աշաց իմոց /Սաղմ., ԺԲ, 5/*:

Ի տարբերություն վերոհիշյալ տարբերակների, նույն շարադասական մասնակաղապարի { «Կոչ.» → O կամ A → P → (O A) } տարբերակում հրամայական բայով ստորոգյալը համեմատաբար թույլ շեշտվածություն ունի, եթե սկզբնային կոչականից ընդմիջված է իր որևէ լրացումով, որն այդ դիրքում է հայտնվել ընդգծման նպատակով, ինչպես՝ *Որդեանկ, իմոյ բանից մատո՛ւ գունկն քո /Առակք, Ե, 1/*: Այն դեպքում, երբ չկան այլ բայական լրացումներ (վերջադաս), և կատույցի շարադասական մասնակաղապարը ունի բաղադրիչների { «Կոչ.» → O կամ A → P } հաջորդականությունը, հրամայական նախադասությունը եզրափակող ստորոգյալը, անշուշտ, տրամաբանորեն էլ ավելի թույլ է շեշտված, ինչպես՝ *Արդ, թագատո՛րք, զայս ի միտ առէք /Սաղմ., Բ, 10/*: Այդպես է նաև, { O կամ A → «Կոչ.» → P } մասնակաղապարով արտահայտված հրամայական նախադասություններում, որտեղ կոչականը ընկած է ստորոգյալի միջուկի բաղադրիչների արանքում՝ տրոհելով այն թույլ ընդգծվող երկու մասերի: Այս է պատճառը, որ նման նախադասությունները սովորաբար ոչ թե կարգադրություն կամ կոչ են արտահայտում, այլ աղերսանք, խնդրանք կամ հորդոր, ինչպես՝ *Չճանապարհս քո, Տէ՛ր, ցոյց ինձ /ն.տ., ԻԳ, 4/*:

Այժմ քննության առնենք այն հրամայական նախադասությունները, որոնք իրենց մեջ կոչական չունեն։ Վերևում նշեցինք, որ կոչականի առկայությունը սրանցում նպաստավոր հանգամանք է առանց այն էլ քիչ գործածական ենթակայի էլ ավելի պասիվ դրսևորման տեսակետից։ Մոտավոր հաշվումներով քսանից մեկ դեպքում է որ հրամայական նախադասության մեջ միաժամանակ առկա են և՛ կոչականը, և՛ ենթական։ Այն, որ կոչականի առկայությամբ ենթակայի անհրաժեշտությունը լիովին ավելորդ է դառնում, փաստվում է նաև նրանով, որ կոչականի բացակայության դեպքում ենթական հրամայական նախադասություններում համեմատաբար հաճախադեպ է հանդես գալիս՝ դրսևորվելով միջին հաշվով ութ դեպքերից մեկում։

Այն հրամայական նախադասությունները, որոնցում կան կոչական ձայնարկություններ, դասական գրաբարում հանդես են գալիս մի քանի շարադասական կաղապարներով։ Դրանք բոլորն էլ պարտադրաբար սկսվում են կոչական ձայնարկությամբ։ Սովորաբար վերջինիս հաջորդում է ենթական (եթե կա), ապա՝ ստորոգյալն իր լրացումներով (եթե դրանցից առկա են)։ Ենթակա ունեցող կառույցներում շարադասական բաղադրիչները գերազանցապես դասավորված են հետևյալ հաջորդականությամբ. ամենաշատ հանդիպողը { «Ձայնարկ. → S → P → (ՕկամA) } մասնակաղապարն է՝ *Աղէ՛, դու ասա՛ ինձ զայս ամենայն մեղմով* /Ազաթ., 62 /: Համեմատաբար ավելի սակավադեպ են { «Ձայնարկ.» → S → ՕկամA → P } և { «Ձայնարկ.» → S → ՕկամA → P → ՕկամA } կաղապարներով արտահայտվող հրամայական նախադասությունները, օրինակ՝ *Աղէ՛, դու հրովարտակ ի դուռն տուր վասն այրուձիտյն* /Եղ., 120 /:

Կոչական ձայնարկությամբ հրամայական նախադասությունների մեծ մասում, ինչպես ասվեց, ենթակաները չկան։ Այս պարագայում վերոհիշյալ կառույցները դրսևորվում են սովորաբար { «Ձայնարկ.» → P → ՕկամA } և սրանից ավելի ծավալուն { «Ձայնարկ.» → ՕկամA → P → ՕկամA } կամ, ընդհակառակը, միայն ձայնարկությամբ և ստորոգյալով արտահայտված { «Ձայնարկ. → P } շարադասական կաղապարներով, ինչպես օրինակ՝ *Աղէ՛, լուր մեծի մարգարէին՝ յառաջընթաց կարապետին Յովհաննու* /Ազաթ., 338 /: *Աղէ՛ տուր ինձ գիտել ...* /Բուգ., 141 /: *Տի՛ օն անդր թողէք զյիմարութեան զբարբաջմունսդ* /Եղ., 66 /: *Հասպա՛, ժի՛ր լերուք* /Ա.Մակ., Ե, 32 /: *Օն, եկա՛յք* /Յոհ., ԺԱ, 16 / և այլն։

Հարկ է նշել, որ ձայնարկությունների շնորհիվ զգալի չափով մեղմանում է նախադասությունների հրամայական հնչերանգը՝ ձեռք բերելով ավելի շատ աղաչական, խրախուսական կամ խնդրական երանգներ։

Հրամայական նախադասությունների մի տարատեսակ են այն կառույցները, որոնց մեջ հրամայական բայ-ստորոգյալին հարադրվում է նույնպիսի քերականական ձևավորում ունեցող մեկ այլ բայ, որը, սակայն, հանդես է գալիս ոչ իր բայական իմաստով, այլ ձայնարկության կամ վերաբերականի նշանակությամբ։ Այսպես, եթե *Թո՛ղ մեզ զամենայն յանցումն չարեացն* /Ազաթ., 225 / կամ *Թո՛ղ զպատարագն քո առաջի սեղանոյն* /Մատթ., Ե, 24 / կառույցներում գործ ունենք ստորոգյալի դերով հանդես եկող *թողուլ* բայի եզակի հրամայականի ձևերի հետ, ապա *Թող եկեսցէ դմա ուրախութիւն* /Ազաթ., 48 / նախադասության մեջ այդ բայի հրամայականը այլևս ստորոգյալ չէ, այլ վերաբերական բառի իմաստ ունի, որ նկատելիորեն մեղմում է հրամայական հնչերանգը : Այսպես են ընկալվում նաև հրամայականի *արի՛, եկ, տես՛* և այլ ձևերը հետևյալ բնագրային օրինակներում՝ *Եկ հավանեաց բանից աչազեղոյ դատերս Այանաց՝ տալ զպատանհիդ* /ՄԽՊՀ, 2, Ծ /: *Արի անց ի տեղին, ի Բեթել* /Ծննդ., ԼԵ, 1 /: *Խաղա՛ գնա՛ դու յերկիրն Քուշանաց* /Եղ., 18 /: *Արի՛ ա՛ռ զմանուկդ և զմայր իւր* /Մատթ., Բ, 13 /: *Արդ տես խնդրեա՛ այր մի իմաստուն* /Ծննդ., ԽԱ, 33 / և այլն։ Նմանատիպ հրամայական նախադասությունները, գրեթե առանց բացառության, արտահայտվում են { «Վերաբ.» → P → ՕկամA } շարադասական մասնակաղապարով։ Եթե կառույցն իր մեջ ունի նաև կոչական կամ ենթակա, ապա առաջինը գերազանցապես գրավում է նախադասության սկիզբը (*Այժի՛ց Հայոց արքայ, եկ նի՛ստ ի խրճան խոտոյ ի վերայ* /Բուգ., 4, ԺՁ /), իսկ երկրորդը՝ ստորոգյալին անմիջապես հաջորդող դիրքը (*Արի՛ և գնա՛ դու ի կողմն հարաւոյ* /Գործք, Բ, 26 /):

Վերևում ասվեց, թե կոչականի բացակայությունը հրամայական նախադասություններում զգալիորեն մեծացնում է ենթակայի գործածության հաճախականությունը։

Այդ է վկայում նաև բնագրային հարուստ նյութի վիճակագրական հանգամանալի քննությանը: Դասական գրաբարում ենթակա ունի այսպիսի նախադասությունների գրեթե 12 %-ը: Ընդ որում, ամենագործածականը սրանցում բաղադրիչների {  $P \rightarrow S \rightarrow O$  կամ  $A$  } հաջորդականությունն ունեցող շարադասական մասնակաղապարն է: Այն գրեթե հավասարաչափ դրսևորում ունի և՛ թարգմանական, և՛ ինքնուրույն գործերի լեզվում, և կարելի է համարել ամենատվորական շարադասական վիճակը նման նախադասությունների համար՝ հրամայական ուժգին շեշտով սկզբնային ստորոգյալ, վերջինիս հաջորդող բացարձակապես աննշանակ ենթակա և նախադասությունը եզրափակող բայական անդամի լրացում կամ լրացումներ:

Օրինակներ՝ *Սրբեա՛ր դու ինձ գամենայն անդրանիկ նախծին* /Ելից., ԺԳ, 2/; *Պատրաստեա՛ր դու ինձ աստ եօթն զուարակ և եօթն խոյ* /Թիւք, ԻԳ, 1/; *Ապաշտեա՛ր դու ի չարեացո՞ք քոց յայդցանէ* /Գործք, Ը, 22/; *Խաղա գնա՛ր դու յերկիրն Բուշանաց* /Եդ., 18/ :

Եզակի դեպքերում է, որ շեշտակիր ստորոգյալին անմիջապես հետադաս դիրքում ձևական ենթական տրամաբանորեն չեզոք չէ: Դա արվում է ենթակային և, նաև շաղկապների կամ այլ բառային միջոցների հարադրմամբ, որոնք ի զորու են նկատելիորեն ընդգծել ենթական, ինչպես՝ *Երթա՛յք և դուք յայգի իմ* /Մատթ., Ի, 4/:

Անավել սակավադեպ են {  $P \rightarrow O$  կամ  $A \rightarrow S$  } շարադասական կաղապար ունեցող հրամայական նախադասությունները: Սրանցում, ի տարբերություն նախորդի, ստորոգյալի միջուկն ամբողջական է ենթակայի՝ վերջնային դիրքում հայտնվելու շնորհիվ, ինչը տեղի է ունենում հիմնականում ենթակայի ծավալումության, երբեմն նաև՝ այդ դիրքում նրա ընդգծվելու պատճառներով, թեև նախադասության վերջն այս առումով սովորաբար հարմար դիրք չէ ենթակայի համար: Համենայն դեպս նշենք, որ այս մասնակաղապարը բնագրերում գերազանցապես վկայված է բազմանդամ ենթակայի առիթով, ինչպես՝ *Ե՛լ առ Տէրն դու և Սհարոն և Նադաբ և Աբիուդ և եօթանասուն այր ի ծերոցն Իսրայիլի* /Ելից., ԻԳ, 1/:

Ենթական, ստորոգյալը և վերջինիս լրացումները կարող են հանդես գալ ևս մի քանի շարադասական մասնակաղապարներով: Դրանցից մեկը {  $S \rightarrow (O$  կամ  $A) \rightarrow P \rightarrow (O$  կամ  $A)$  } մասնակաղապարով հրամայական կառույցն է, որում եթե ձևական ենթական նույնիսկ իր առաջադասությամբ չի կարող նկատելի դառնալ, ապա դրան հակառակ՝ ստորոգյալին նախորդող դիրքում բայական լրացումն անշուշտ տրամաբանորեն ընդգծված է, ինչպես՝ *Դուք վաղվադակի այրուծի զումարեցէ՛ք առաջոյ քան զիս* /Եդ., 20/ կամ *Եւ դու անդէն արա՛ք եզր բնակութիւն* /ն.տ., 18/ : Հավանաբար դա է պատճառը, որ այսպիսի նախադասություններում շատ հաճախ առաջադաս բայական լրացումը զեղչված է լինում՝ ստորոգյալի հրամայական հնչերանգը չթուլացնելու նպատակով ({  $S \rightarrow P \rightarrow O$  կամ  $A$  } շարադասական մասնակաղապար): Այդպես է, օրինակ՝ *Եւ դուք մի՛ խնդրէք զինչ ուտիցէք* /Լուկ., ԺԲ, 29/ : *Դու տես՛ զճշմարիտ կերպարանս բերել ի սուրբ կուսէն* /Ազաթ., 402/ և այլ նախադասություններում: Մինչդեռ նույնը չի կարելի ասել ստորոգյալին հետադաս բայական լրացման մասին, որի զեղչման դեպքում հրամայական բայը հայտնվում է իր համար անսովոր թույլ դիրքում ({  $S \rightarrow O$  կամ  $A \rightarrow P$  } շարադասական մասնակաղապար): Այս դեպքում նախադասությամբ արտահայտվածը իրականում ավելի շատ հորդոր կամ խնդրանք է, քան հրաման, ինչպես, օրինակ՝ *Այլ դու յետ ամենայնի այլ զմեզ մի՛ հարցաներ* / Եդ., 82/ :

Մեզ մնում է դիտարկել նաև զեղչված ենթակայով այն հրամայական կառույցները, որոնցում միայն ստորոգյալն է՝ իր լրացումների հետ: Սրանք ոչ միայն մեծաքանակ են դասական գրաբարում, այլև կազմում են ընդհանուր առմամբ բոլոր հրամայական նախադասությունների գերակշիռ մասը (ավելի քան 70 %-ը): Իսկ սրանց մեջ համոզված կարելի է ասել՝ բացարձակ գերակշռություն ունեն {  $P \rightarrow O$  կամ  $A$  } շարադասական կաղապարով արտահայտվող նախադասությունները, որոնցում հրամայական բային հաջորդում են նրա մեկ կամ ավելի լրացումներ:

Օրինակներ՝ *Չզո՛յշ լերուք յողորմութեան ձերում* /Մատթ., 2, 1/; *Մի՛տ դիր ընթերցումածոց միսիթարութեան վարդապետութեան* /Կոր., 124/ : *Բա՛րձ և փարատեա՛ զմեզ չարութեան կոսպաշտութեան հեթանոսութեան քաղցրութեան սիրով քով առ արարածս* /Ազաթ., 94/ : *Պատմեցէ՛ք ի հեթանոսս զգործս նորա* /Մաղմ., ԸԳ, 1/ : *Հե՛ղ զբարկութիւն քո ի վերայ հեթանոսաց* /Երեմ., Ժ, 25/ :

Ի դեպ, հատկապես այս շարադասական մասնակադասարն ունեցող հրամայական մախադասությունների առիթով նշենք, որ գրաբար բնագրերում նկատելի է մի հետաքրքիր ոճական հնարքի օգտագործում, որը բավականին ցայտուն դիտվում է մասնավորապես գեղարվեստական գունավորում ունեցող կտորներում, հատկապես «Աստվածաշնչում»: Խոսքը վերաբերում է այն իրողությանը, երբ բարդ համադասական մախադասության կազմիչ պարզ մախադասություններից առաջինում առկա է շարադասական բաղադրիչների  $\{ P \rightarrow \text{ՕկամA} \}$  դասավորության կարգը, որը երկրորդում ուղղակի շրջվում է՝  $\{ \text{ՕկամA} \rightarrow P \}$ : Ոճաարտահայտչական այս միջոցի (շրջույթ) դերն այն է, որ շեշտված ստորոգյալների միանգամայն հակադիր դասավորության շնորհիվ մի տեսակ հավասարակշռում է արտասանական հնչերանգը բարդ կառույցի երկու եզրերի վրա՝ ձերբազատելով խոսքը միակերպությունից, շարադասական կադասարի կրկնությունից, շարադասանքի միապաղաղ ոճից:

Օրինակներ՝ *Տո՛ր նոցա ըստ գործոց նոցա, ըստ անօրէնութեան գնացից նոցա հատո՛ նոցա /Մաղմ., ԻԷ, 4/*: *Առէ՛ք ի պտղոյ երկրիս յամանս ձեր ... եւ արծաթ կրկին առէ՛ք ի ձեռս ձեր /Մանգ., ԽԳ, 12/*: *Նահանջեա՛ գտրոմօղ բարաղ չորակերութեամբ և զխատութիւն սրտիդ կակղեա՛ տքնութեամբ /Եզն., 252/*: *Մի՛ փոխեր զսահմանս յախտեմականս և ի ստացուածս որբոց մի՛ մտանիցես /Ն.տ., 10/*

Հակառակ իրողությունը, երբ համադաս եզրերից առաջինում  $\{ \text{ՕկամA} \rightarrow P \}$ , իսկ երկրորդում  $\{ P \rightarrow \text{ՕկամA} \}$  հաջորդականությունն է, համեմատաբար սակավ դրսևորում ունի, ինչպես՝ *Չճշմարտութիւն ստացի՛ր, և մի՛ թողուր զիմաստութիւն և զխրատ /Առակք, ԻԳ, 23/*: *Չամենայն ազգս հաւաքեա՛ և անցո՛ ըստ Պահ դուռն ի ներքս /Եղ., 18/*: *Ի գիներբոս գիւնոյ մի՛ յանդիմաներ զներձատրն և մի՛ անգոսներ զնա յորայխութեան նորա /Սիր., ԼԵ, 41/*:

Թեև գեղջված ենթակայով հրամայական մախադասությունների մեծ մասը, ինչպես ասվեց, ունեն  $\{ P \rightarrow \text{ՕկամA} \}$  դասավորության կարգը, այնուամենայնիվ երբեմն այդ կարգը շրջվում է, ինչի պատճառով ստորոգյալը կարող է հայտնվել ինչպես միջակա, այնպես էլ մախադասությունը եզրափակող դիրքերում: Ընդամին, երկու դեպքում էլ ստորոգյալին անմիջապես մախորդող խնդիրը կամ պարագան զգալի տրամաբանական ընդգծվածություն են ստանում:

Օրինակներ՝ *Յամենայն սրտէ քումմէ փառավորեա՛ զհայր քո /Սիր., Է, 28/*: *Չշաւիղս քո ուսո՛ ինձ /Մաղմ., ԻԴ, 5/*: *Ի ձեզէն հանէ՛ք ի խաչ /Յոհ., ԹԺ, 6/*: *Միայն յօժարութիւն կամաց սրտին՝ սիրով մատուցանել զլսելիս /Ազաթ., 11/*: *Բայց զայս բան կատարեցէ՛ք վաղվադակի /Եղ., 18/*:

Ի դեպ, նկատելի է, որ հրամայական բայով ստորոգյալի միջակա դիրքը բնորոշ է հատկապես մեծածավալ կամ բազմաբառ մախադասություններին: Ամենայն հավանականությամբ այդպիսի դիրքում ստորոգյալն ունի մաս ծավալուն կառույցի երկու խոշոր հատվածների արտասանական հնչերանգը՝ հավասարակշռող միջոցի դեր, ինչպես՝ *Եւ զմեզ, հեռի մարմնով, մերձ համարեալ հոգով՝ յիշեցէ՛ք ի ձեր ի նորաքեր յաղօթոյ, ի ձերում պարգևեալ փրկութեանդ /Ազաթ., 825/*:

Սակավ բացառություններով՝ գերազանցապես  $\{ P \rightarrow \text{ՕկամA} \}$  շարադասական մասնակադասարն ունեն դիմավոր և անդեմ միակազմ հրամայական մախադասությունները: Արգելական հրամայականով արտահայտված ստորոգյալը դիմավոր միակազմ կառույցներում համարյա միշտ սկզբում է և ունի բարձր հրամայական հնչերանգ, ինչի շնորհիվ այսպիսի կառույցները արտահայտում են հատու հրաման, կարգադրություն, խրախույս կամ կոչ:

Օրինակներ՝ *Մի՛ տար զեկեղեցի քո յայս կատականաց անօրէն իշխանիս այսորիկ /Եղ., 98/*: *Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո /Ելից., Ի, 18/*: *Մի՛ խնայեր խրատել զտղայ /Առակք., ԻԳ, 13/*: *Մի՛ խտորիր բարկութեամբ ի ծառայէ քումմէ /Մաղմ., ԻԶ, 9/*: *Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն /Ն.տ./*:

Նույնպիսի ոճաարտահայտչական նշանակություն ունեն մասն  $\{ P \rightarrow \text{ՕկամA} \}$  շարադասությունն ունեցող անդեմ միակազմ հրամայական մախադասությունները, թեև քիչ գործածական են մախորդների համեմատությամբ:

Օրինակներ՝ *Ճանաչել զինաստութիւն և զխրատ* /Կոր., 50/: *Միրել զԱստուածութիւն յամենայնէ սրտէ և յամենայնէ անձնէ և զօրութեամբ* /Ազաթ., 320/: *Խնդալ ընդ խնդագողս* /Հովմ., ԺԲ, 15/:

Երբեմն մի՛ արգելականին անմիջապես հաջորդում է որևէ բայական լրացում: Ընդ որում, ինչքան խոնարհված բայը կամ անորոշ դերբայը հեռանում է արգելական մասնիկից դեպի նախադասության վերջ, այնքան թուլանում է հրամանի ուժը, ինչպես՝ *Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել* /Ա.Պետր., Գ, 9/: *Մի՛ կարի զանձն քո աշխատ առներ այդչափ* /Բուզ., 142/ և այլն:

Անդեմ և հատկապես դիմավոր միակազմ հրամայական նախադասությունների չնչին մասն է արտահայտվում {ՕկամA → P } շարադասական մասնակաղապարով կամ դրա՝ նաև հետադաս լրացում ունեցող ավելի ծավալուն տարբերակով որտեղ, անշուշտ, իր լրացյալին առաջադաս խնդիրը կամ պարագան որոշակի շեշտվածություն ունի, ինչպես՝ *Յակնաջս անզգամի ամենևին մի՛ խօսիր* /Առակք, ԻԳ, 4/: *Չհանդերձս ձեր մի՛ պատատէք* /Ղևտ., Ժ, 6/: *Մարմնով հանդերձ, սսէ, կրել զբարիս և զչարիս և ոչ միայն հոգով* /Եզն., 292/: *Հասպա վաղվադակի զինի ...և զինչ պիտի յորայտութեան հանդերձ՝ Հրէիցն մատուցանել զեօթն օր* /Գ.Մակ., Ի, 21/:

Համառոտագրություններ

Ազաթ. -- Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914:  
Բուզ. -- Փաստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:  
Եզն. -- Եզնկայ վարդապետի Կողբացոյ «Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914:  
Եղ. -- Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:  
Կոր. -- Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:  
ՂՓՊՀ -- Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տիֆլիս, 1904:  
ՄԽՊՀ -- Մովսիսի Խորենացոյ Պատմություն Հայոց, Տիֆլիս, 1913:  
Ս. Գրքի (Աստուածաշունչ մատենան հնոց և նորոց Կտակարանաց, Կ.Պոլիս, 1895) համառոտագրություններից՝ Առակք.--Առակք Սողոմոնի, Բ.Տիմօթ.--Թուրք երանելոյն Պօղոսի առաքելոյ առ Տիմօթոս երկրորդ, Գ.Մակ.--Գիրք Երրորդ Մակարայեցոց, Գործք --Գործք Առաքելոց, Եզնկ.--Մարգարտութիւն Եզնկիէլի, Ելից--Գիրք Ելից, Երզ --Երզ Երզոց, Թիւք --Գիրք Թուոց, Հովմ.-- Թուրք երանելոյն Պօղոսի առաքելոյ առ Հովմայեցիսն Առաջներորդ, Ղևտ.--Գիրք Ղևտականք, Ղուկ.--Մրրոյ Անտարանիս Յիսուսի Քրիստոսի ըստ Ղուկասու, Մատթ.--Մրրոյ Անտարանիս Յիսուսի Քրիստոսի ըստ Մատթոսի, Յուդիթ --Գիրք Յուդիթայ և այլն:

СЛОВООРЯДКОВЫЕ МОДЕЛИ ПРЕДЛОЖЕНИЙ С ОСОБОЙ ИНТОНАЦИЕЙ В КЛАССИЧЕСКОМ ГРАБАРЕ

\_\_\_ Резюме \_\_\_ \_\_\_ С. Айрапетян \_\_\_

Исследуются особенности порядка слов в повелительных предложениях классического староармянского языка (грабар), рассматриваются все словопорядковые модели и свойственные им стилистикоэкспрессивные значения как в оригинальных, так и переводных источниках того языкового периода.

Особое внимание уделяется вопросам взаимосвязи и взаимообусловленности повелительной интонации, структуры предложения и словопорядковой организации в этих моделях.